ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Լեռնանիստ, /094-55-33-04, lernanist1828@mail.ru,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ՄԱՐՏԻ 2019թվականի N 18-Ա

ՄԱՐՏԻ 8-Ի ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՆՎԵՐՆԵՐ ԳՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24 -րդ կետով , 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, 46 -րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի պահանջներով և հիմք ընդունելով Լեռնանիստ համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 5-ի N 69-Ն որոշումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Մարտի 8-ի կապակցությամբ 2019 թվականի բյուջեից ծախսել 597 500 /հինգ հարյուր ինսունյոթ հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ, որից՝

1) 01.1.1.51 /օրենսդիր և գործադիր մարմիններ պետական կառավարում/ ծրագրի 4269 /հատուկ նպատակային նյութեր/ հոդվածից ծախսել 30 000 /երեսուն հազար / ՀՀ դրամ՝ համայնքապետարանի թվով 15 կին աշխատողներին նվերներ ձեռք բերելու համար:

2) 08.2.4.51 /այլ մշակութային կազմակերպություններ / ծրագրի 4239 հոդվածից ծախսել 567.500/ հինգ հարյուր վաթսունյոթ հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ, համայնքի թվով 142 կին թոշակառուներին, 44 դպրոցում աշխատող կանանց, 6 բժշկական ամբուլատորիա ՀՈԱԿ-ի կին աշխատողներին , 19 մանկապարտեզ ՀՈԱԿ-ի կին աշխատողներին ծաղիկներ և նվերներ ձեռք բերելու համար:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՏՅՈՄ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

2019 թ մարտի 7
գ.Լեռնանիստ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Լեռնանիստ, /094-55-33-04, lernanist1828@mail.ru,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ՄԱՐՏԻ 2019թվականի N 19-Ա

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի,Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N731-Ն և N912-Ն որոշումների,Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 48-րդ կետերի.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի սեփականություն հանդիսացող 0.0892 հա մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակությամբ հողամասում Մանվել Հարութի Խաչատրյանի կողմից ինքնակամ կառուցված 151,29 քմ արտաքին մակերեսով մեքենակայանը համարել Լեռնանիստ համայնքի սեփականություն և ճանաչել օրինական համաձայն հատակագծի:

2.Ընդունել ի գիտություն,որ

1) շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը,վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

2) շինությունը կառուցված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա,ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում.

3) շինությունը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ Լեռնանիստ համայնք 1-ին փողոց թիվ 66 :

4. Սույն որոշումից ծագող իրավունքի պետական գրանցման օրվանից 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկություն անել ինքնակամ կառույցը իրականացրած Մանվել Հարութի Խաչատրյանին՝ սույն որոշման 1-ին կետում նշված շինությունը և հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) տրամադրելու մասին:

5. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման կողմից:

6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՍԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

20 19թ. մարտի 13
գ.Լեռնանիստ